

Եաֆայի (Յոպպէ) Հայոց Ս. Նիկողայոս Վանքի Ընդհանուր Նորոգութիւն

Օգոստոս 2005

Միջնադարեան ճարտարապետութեան լաւագոյն նմուշներէն մին կը ներկայանայ մինչեւ օրս միջերկրականի ալիքները իր եկեղեցոյ գաւթի մէջ ընդունող Եաֆայի Հայոց Ս. Նիկողայոս վանքը:

Կը պատմուի թէ այս վանքի կամարները որպէս հիւանդանոց ծառայած են Նաբոլիոն Պօնաբարթ կայսերի զինուորներուն, ուր ինք ալ անձամբ գտնուած է:

Հայոց մեծ գաղթականութեան յաջորդող Տարիներուն մինչեւ 1960ական շրջանը, այս վանքի պատերուն ներքեւ ապաստան գտած են քանի մը հարիւր Հայեր:

1970 թուէն ետք վանքն աստիճանաբար կորսնցուցած իր բնակիչները ու իր դռները բաց է պահած միայն երկշաբաթեայ դրութեամբ ընդունելու Երուսաղէմէն ժամանող պատարագիչ Հայր Սուրբը: Մինչ այդ պատահական անբաղձալի այցելուներ ապաստան գտած են հոն:

Բարեբախտաբար 1982ին կազմակերպուող ու հիմնադրուող Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը, նոր կեանք ու խանդ կը բերէ վանքի ամայացած միջավայրին, օգտագործելով վանքին սենեակներէն մին որպէս ակումբ, կեդրոնական սրահը որպէս դպրոց-դասարան ու եկեղեցոյ գաւիթը որպէս խաղավայր:

Հ.Մ.Ը.Մ.ը այդ վանքի սուրբ պատերուն բերած կենդանութեան հետ զուգահեռ նոր աւիշ կը ներարկէ նաեւ գաղութային կեանքին ուր շաբաթօրեայ հաւաքոյթներ, տօնախմբութիւններ, պտոյտներ, ֆութպոլի միջ մասնաճիւղային խաղեր կը դառնան Եաֆայի Հայ իրականութիւնը ճոխացնող պատկերներ:

Այսօր, Եաֆայի Հայոց Վանքը ընդհանուր նորոգման մէջ է եւ որպէսզի այդ ընթացակարգը անխոչընդոտ, Սաղիմահայ Ս. Աթոռը կը պահանջէ որ Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը դուրս բերէն իրենց միութենական գոյքերը իրենց մինչեւ ցարդ տրամադրուած անկիւնէն եւ ժամանակ մը դադրին ազատ ելումուտ կատարելէ վանք քանգի ըստ տեսուչ Հայր Սուրբին, արդէն եկեղեցոյ ճակտին ամրացած խորանն ալ փոխադրուած այլ վայր եւ մօտ օրէն պատարագ մատուցանելու ալ յարմարութիւն պիտի չ'ըլլայ:

Լաւագոյն պարագային կ'առաջարկուի վանքի անմիջական պարիսպներէն դուրս գտնուող Նկուղի մը մէջ կեդրոնացուին միութենական գոյքերը մինչեւ ապագայ տարբեր տնօրինում:

Այո՛ կ'ըսեն համբերատար եղէք քանգի վանքի անմիջական շրջապատի մէջ 18 արդիական յարկաբաժիններ պիտի բարձրանան, որոնք ծախու թէ վարձու պիտի տրուին բոլոր հարցնողաց եւ այդ լուրջ եկամուտ պիտի թողու վանքի գանձին: Իսկ հեռաւոր ապագային, 99 "կարճ" տարիներ ետք, այդ բոլորը Հայոց սեփականութիւնը պիտի դառնայ:

Այդպէս կ'ըսէ Ս. Աթոռի թէ Իսրայէլացի կապալառուի (contactor) միջեւ կայացած համաձայնագիրը, ուր նոյն այս ազնուասիրտ կապալարուն կը խօստանայ նոյն այս հսկայական գործին մէջ ներառնել նաեւ մեզի բաժին մնացած եկեղեցոյ թէ գաւիթի նորոգութիւնը կ'երեւայ թէ ձո՛ի: Օրին, այդ օրին, պիտի վայելէք երջանկութիւնը տեսնելու արմատապէս թէ հիմնովին վերանորոգուած եկեղեցին, գաւիթը թէ որպէս ակումբ օգտագործելի սրահը:

Ինչպէ՞ս չի խանդավարուիլ եւ չի շնորհաւորել այսպիսի խիզախ նախաձեռնութիւն:

Ինչպե՞ս կարելի է բարենաղթություններէ անդին խօսք ընել:

Առդարեւ գէթ որպէս խղճի պարտք եւ մաշած զգուշաւորութիւն, պարտք կ'զգանք այդ բարենաղթութեանց զուգահեռ խիստ կարճ հարցականներ յտաջացնել. -

- Ա. Կարելի՞նք է արդեօք այս Սուրբ Երկրին բաց երկնքին տակ գտնել քիչ-շատ գիտակից ու նախանձախնդիր Հայ արարած, որ Ս. Աթոռի եւ որեւէ Իսրայէլեան շինարարական ընկերութեան միջեւ կայացած համաձայնագրերու նկատմամբ գլխապտոյտ չ'զգայ, մանաւանդ երբ ինքն իշխանութիւնը շատ առթիւ արտայայտած է իր իսկ մտահոգութիւնը ու ցասումը հանդէպ իր ձեռամբ իսկ ստորագրուած ու վաւերացուած համաձայնագրերուն, աւելորդ պիտի չ'ըլլայ եթէ ըսենք թէ իշխանութիւնը ինք կ'ապրի յաճախ խաղի ընկած ըլլալու մոլորականը:
- Բ. Ե՞րբ է ամբողջանալու սկսուած վերանորոգման աշխատանքը, ինչ կը նշանակէ «մինչեւ յարմար տնօրինում»: Եթէ այդ դատենք այս Իշխանութեան կողմէ նախաձեռնուած շատ մը շինարարական ծրագրերու ճակատագրէն յատկապէս Կիւլպէնկեան Մատենադարանի նորոգման ընթացքէն որ ամբողջ 12 տարի տակաւին կը յամենայ անպայման մտահոգուելու իրաւունք ունինք:
- Գ. Լաւագոյն պարագային Տիրոջ կամօք երկու թէ երեք տարի ետք եթէ աւարտի այս ծրագիրը, որուն տարողութեան մասին մինչեւ օրս ոչ մի հաւաստի տեղեկութիւն չ'ունինք, արդեօ՞ք պիտի յաջողինք Եաֆայի շրջանի առանց այդ ալ ցաք ու ցրի շուարած Հայերը վերադարձնել եկեղեցի, դպրոց, ակումբ:
- Դ. Վերջապէս, մեր ունեցած փորձութեանց թէ փորձարկութեանց վրայ հիմնուած, բիր պատճառ ունինք մտահոգուելու, բողոքելու, սրտնեղելու այսուհանդերձ, հակառակ վերոյիշեալ մեր մտմտութիւն այս պարագային կ'ուզենք սխալած դուրս գալ:



Խմբանկար Եաֆայի Հ.Մ.Ը.Մ. «Հայկաշէն» Մասնաճիւղի հիմնադրման պահուն Ս. Նիկողայոս վանքի հնամենայ կամարներու ներքեւ, 1984: